# Գյուղական տարածքների տնտեսական զարգացման (ԳՏՏԶԾ) և Գյուղական ձեռնարկատիրության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման (ԳՁՓԱԳԶԾ) ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկեր

| | |
|---|---|
| Վարկի առավելագույն գումար | 150՝000 ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ |
| Վարկի նվազագույն գումար | 2՝000 ԱՄՆ դոլար կամ 1՝000՝000 ՀՀ դրամ |
| Վարկի տրամադրման ժամկետ | 19-84 ամիս |
| Տարեկան տոկոսադրույք | 13% |
| Հայտի ուսումնասիրության վճար | 5՝000 ՀՀ դրամ |
| Վարկի սպասարկման վճար | սկսած 2-րդ տարվանից՝ յուրաքանչյուր տարի վարկի մնացորդի 0.5% |
| Վարկի տրամադրման վճար | միանվագ.<br>ա) մինչև 24 ամիս մարման ժամկետով՝ վարկի գումարի 1%<br>բ) 24-48 ամիս մարման ժամկետով՝ վարկի գումարի 1.5%<br>գ) 48 ամսից ավելի մարման ժամկետով՝ վարկի գումարի 2% |
| Մարման ենթակա վարկի գումարը կամ դրա մասը վարկային պայմանագրի ժամանակացույցով սահմանված ժամկետում չմարելը | տույժ՝ ժամկետանց վարկի գումարի 0.25%՝ ուշացված յուրաքանչյուր օրացուցային օրվա համար և վարկի տարեկան 16% դրույքաչափի սահմանում՝ 13%-ի փոխարեն, որը կիրառվում է վարկը կամ դրա մի մասը ժամկետանց դառնալու օրվանից վարկի ամբողջ մնացորդի վրա (ներառյալ՝ ժամկետանց մասը) |
| Վարկի տոկոսի վճարման ժամկետները խախտելը | սահմանված ժամկետում չվճարված տոկոսի գումարի 0.5%-ի չափով տույժ՝ ուշացված յուրաքանչյուր օրացուցային օրվա համար, իսկ 3 անգամ անընդմեջ ժամկետները խախտելու դեպքում՝ վարկի տարեկան 16% դրույքաչափի սահմանում՝ 13%-ի փոխարեն, որը կիրառվում է 3-րդ անգամ խախտելու օրվանից՝ վարկի ամբողջ մնացորդի վրա |
| Վարկի ոչ նպատակային օգտագործումը | խախտումը արձանագրելու պահին միանվագ տուգանք՝ պայմանագրային գումարի 1%-ի չափով, վարկի տարեկան 16% դրույքաչափի սահմանում՝13%-ի փոխարեն և 30 օրվա ընթացքում վարկի մնացորդը և հաշվեգրված տոկոսները հետ վերադարձնելու պահանջի ներկայացում |
| Իրավաբանական անձ-վարկառուի մասնակիցների և գործադիր մարմնի կազմում փոփոխությունների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատվելուց հետո՝ 1 շաբաթվա ընթացքում, Բանկին չտեղեկացնելը | միանվագ տուգանք՝ 50’000 ՀՀ դրամ |
| Վարկի սպասարկման ընթացքում առանց Բանկին տեղեկացնելու գործունեության ոլորտը փոփոխելը | միանվագ տուգանք՝ վարկի պայմանագրային գումարի 0.1%-ի չափով, վարկի տարեկան 16% դրույքաչափի սահմանում՝ 13%-ի փոխարեն և 30 օրվա ընթացքում վարկի մնացորդը և հաշվեգրված տոկոսները հետ վերադարձնելու պահանջի ներկայացում |

Միանվագ տուգանքի գանձում՝ վարկի պայմանագրային գումարի 0.1%-ի չափով, բայց ոչ պակաս քան 25’000 ՀՀ դրամ

- Բանկի պահանջով իր կողմից սահմանված ձևերով ամենամսյա հաշվետվությունները չներկայացնելը և (կամ) դրանցում անարժանահավատ տվյալներ արտացոլելը
- Հարկային և այլ ստուգումների ակտերը չներկայացնելը
- Վարկի սպասարկման ժամանակ 1 շաբաթվա ընթացքում Բանկին չտեղեկացնելը

~ վարկառուի գործունեության ժամանակավոր դադարեցման մասին
~ գործունեության նոր տեսակով զբաղվելու մասին, համապատասխան տեխնիկատնտեսական հիմնավորում չներկայացնելը
~ կանոնադրական կապիտալի փոփոխության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում գրանցվելուց հետո
~ օրենքի իմաստով խոշոր գործարքի առարկա հանդիսացող գործարք կնքելու (գույքը օտարելու, գրավ դնելու, ձեռք բերելու) մասին
~ այլ աղբյուրներից վարկի ստացման, փոխառության ստացման կամ տրամադրման մասին
~ լրացուցիչ պայմանական պարտավորությունների ստանձնման (երաշխավորության տրամադրման) մասին
~ մատակարարման և իրացման պայմանագրերի պայմանների և գործընկերների փոփոխության մասին
~ սակագների փոփոխությունների մասին (հանրային ծառայությունների հանձնաժողովի կողմից, որոնք չեն հրապարակվում)
~ հետաքննության, նախաքննության և դատական գործընթացներին որպես հայցվոր, պատասխանող, կասկածյալ մասնակցելու մասին
~ լիցենզավորվող գործունեությամբ զբաղվող վարկառուի լիցենզիայի վաղաժամկետ դադարեցման կամ կասեցման մասին